«ԳՀԱՊՁԲ-2019/8-2-ԵՊԲՀ» **ծածկագրով**
Գնանշման հարցման հրավերի

«ԵՐԵՎԱՆԻ ՄԽԻԹԱՐ ՀԵՐԱՑՈՒ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԲԺՇԿԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԱՊՐԱՆՔԻ ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

N «ԳՀԱՊՁԲ-2019/8-2-ԵՊԲՀ-3»

Հ.Հ. ք.Երևան **« » « » 2019թ.**

«Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան» հիմնադրամ-ը ի դեմս ռեկտոր՝ Արմեն Աբգարի Մուրադյան-ի, որը գործում է Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան Հիմնադրամ-ի կանոնադրության հիման վրա, այսուհետ «Գնորդ», մի կողմից, և «Սմարթլայն» ՍՊԸ-ը, ի դեմս տնօրեն Տիգրան Ղարիբյան-ի, որը գործում է «Սմարթլայն» ՍՊԸ-ի կանոնադրության հիման վրա, այսուհետ «Վաճառող» մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1. Վաճառողը պարտավորվում է սույն պայմանագրով (այսուհետ՝ պայմանագիր) սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Գնորդին մատակարարել պայմանագրի N 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագիր-գնման-ժամանակացուցով նախատեսված ապրանքը (այսուհետ՝ ապրանք), իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել ապրանքը և վճարել դրա համար:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Գնորդն իրավունք ունի՝

2.1.1 Ապրանքը պայմանագրով սահմանված ժամկետում Վաճառողի կողմից չմատակարարելու դեպքում հրաժարվել ապրանքից, եթե մատակարարման ժամկետները խախտվել են 10 օրից ավելի:

2.1.2 Եթե հանձնվել է անպատշաճ որակի՝ պայմանագրով նախատեսված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք՝

ա) պահանջել հատուցելու ապրանքի անպատշաճ որակի լինելու պատճառով իր կատարած ծախսերը.

բ) չընդունել ապրանքն՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ապրանքը պայմանագրին համապատասխանող որակի ապրանքով անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.3 կետով նախատեսված տուգանքը.

գ) հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ապրանքի համար վճարված գումարը:

2.1.3 Եթե հանձնվել է պայմանագրով որոշվածից պակաս քանակի ապրանք, ապա՝

ա) պահանջել լրացնելու ապրանքի պակաս հանձնված քանակը,

բ) հրաժարվել հանձնված ապրանքից և դրա համար վճարելուց, իսկ եթե ապրանքի համար վճարվել է, ապա պահանջել վերադարձնելու վճարված գումարը և վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

2.1.4 Եթե հանձնվել է տեսակի պայմանի խախտմամբ ապրանք, իր ընտրությամբ՝

ա) ընդունել տեսակի վերաբերյալ պայմանին համապատասխանող ապրանքը և հրաժարվել մնացած ապրանքներից.

բ) հրաժարվել հանձնված բոլոր ապրանքներից և պահանջել վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը.

գ) պահանջել տեսակի վերաբերյալ պայմանին չհամապատասխանող ապրանքի անհատույց փոխարինում պայմանագրով նախատեսված տեսակին համապատասխան ապրանքով:

2.1.5 Վաճառողի կողմից մատակարարման ժամկետների խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել ապրանքի մատակարարման նոր ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

2.1.6 Վաճառողից պահանջել հատուցելու վնասները, եթե Գնորդը Վաճառողի կողմից պարտավորությունը խախտելու հետևանքով պայմանագրի լուծումից հետո ողջամիտ ժամկետում այլ անձից ավելի բարձր, սակայն ողջամիտ գնով գնել է ապրանք՝ պայմանագրով նախատեսվածի փոխարեն՝ պայմանագրով սահմանված և դրա փոխարեն կնքված գործարքի գների միջև տարբերության չափով,

ինչպես նաև ապրանքն այլ անձից ձեռք բերելու համար իր կատարած բոլոր անհրաժեշտ և ողջամիտ ծախսերը:

2.1.7 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Վաճառողն էականորեն խախտել է պայմանագիրը.

2.1.7.1 Վաճառողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատակարարվել է անպատշաճ որակի ապրանք որը չի կարող փոխարինվել Գնորդի համար ընդունելի ժամկետում.

բ) ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 10 օրից ավելի,

2.1.8 Զննել ապրանքը և հայտնաբերված թերությունների մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

2.2 Գնորդը պարտավոր է՝

2.2.1 Կատարել պայմանագրին համապատասխան մատակարարված ապրանքի ընդունումն ապահովող բոլոր անհրաժեշտ գործողությունները:

2.2.2 Վաճառողի հանձնած ապրանքից պայմանագրին համապատասխան հրաժարվելու դեպքում, ապահովել այդ ապրանքի պատասխանատու պահպանությունը և դրա մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

2.2.3 Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում մատակարարված ապրանքն ընդունելու դեպքում Վաճառողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ վճարման ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 6.5 կետով նախատեսված տույժը:

2.2.4 Ապրանքի քանակի, տեսականու, որակի մասին պայմանագրի պայմանները խախտելու մասին Վաճառողին ծանուցել թերությունը հայտնաբերելուց հետո անմիջապես կամ այն բանից հետո՝ ողջամիտ ժամկետում, երբ պայմանագրի համապատասխան պայմանի խախտումը պետք է հայտնաբերված լիներ՝ ելնելով ապրանքի բնույթից և նշանակությունից:

2.2.5 Պայմանագրի 2.3.4 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Վաճառողին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:

2.3 Վաճառողն իրավունք ունի՝

2.3.1 Գնորդից պահանջել ընդունելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված ապրանքը:

2.3.2 Գնորդից պահանջել վճարելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված և Գնորդի կողմից ընդունված ապրանքի համար իրեն վճարման ենթակա գումարները:

2.3.4 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Գնորդն էականորեն խախտել է պայմանագիրը:

2.3.4.1 Գնորդի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե բազմիցս խախտվել են ապրանքի համար վճարելու ժամկետները:

2.3.5 Գնորդի համաձայնությամբ վաղաժամկետ մատակարարել ապրանքը:

2.4 Վաճառողը պարտավոր է՝

2.4.1 Գնորդին հանձնել ապրանքը՝ պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով:

2.4.2 Ապահովել ապրանքի մատակարարումը պայմանագրի 2.1.2 կետի բ) ենթակետին և (կամ) 2.1.5 կետին համապատասխան՝ Գնորդի կողմից սահմանված ժամկետներում:

2.4.3 Գնորդին հանձնել երրորդ անձանց իրավունքներից ազատ ապրանք:

2.4.5 Գնորդին հանձնել պայմանագրով նախատեսված որակի և քանակի ապրանք՝ պայմանագրով նախատեսված ժամկետներում և հասցեով, իսկ Գնորդի պահանջով տրամադրել ապրանքի որակը հավաստող՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված փաստաթղթեր:

2.4.6 Թերի մատակարարում թույլ տալու դեպքում, պայմանագրով նախատեսված կարգով, լրացնել թերի մատակարարվածը:

2.4.7 Հետ տանել Գնորդի կողմից պայմանագրի 2.2.2 կետին համապատասխան՝ պատասխանատու պահպանության ընդունված ապրանքը կամ ողջամիտ ժամկետում տնօրինել այն, ինչպես նաև հատուցել ապրանքը պատասխանատու պահպանության ընդունելու, այն իրացնելու կամ Վաճառողին վերադարձնելու հետ կապված անհրաժեշտ ծախսերը:

2.4.8 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.9 Գնորդին հանձնել ապրանքի պատկանելիքները և համապատասխան փաստաթղթերը:

2.4.10 Պայմանագրի 2.1.7 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Գնորդին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:

2.4.11 Պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Գնորդին:

3. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ ԵՎ ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Պայմանագրի գինը կազմում է ***10312400 (տասը միլիոն երեք հարյուր տասներկու հազար չորս հարյուր) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն:*** Պայմանագրի գինը ներառում է պայմանագրի կատարումն ապահովելու նպատակով Վաճառողի կողմից կատարվելիք բոլոր վճարները (ծախսերը), այդ թվում՝ հարկերը, տուրքերը, փոխադրման, ապահովագրման ծախսերը, պարգևավճարները և ակնկալվող շահույթը:

Ապրանքի մատակարարման գինը կայուն է և Վաճառողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Գնորդը նվազեցնելու այդ գինը:

3.3 Գնորդն իրեն մատակարարված ապրանքի դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Վաճառողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 20-ը:

4. ԱՊՐԱՆՔԻ ՈՐԱԿԸ ԵՎ ԵՐԱՇԽԻՔԸ

4.1 Վաճառողը երաշխավորում է մատակարարված պպրանքի որակի համապատասխանությունը պետական ստանդարտի պահանջներին:

4.2 Հիմնական միջոց հանդիսացող ապրանքների համար երաշխիքային ժամկետ է սահմանվում Գնորդի կողմից ապրանքն ընդունվելու օրվան հաջորդող օրվանից հաշված 365 օրացուցային օրը: Եթե երաշխիքային ժամկետի ընթացքում ի հայտ են եկել մատակարարված ապրանքի թերություններ, ապա Վաճառողը պարտավոր է իր հաշվին, Գնորդի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել թերությունները:

5. ԱՊՐԱՆՔԻ ՀԱՆՁՆՈՒՄԸ ԵՎ ԸՆԴՈՒՆՈՒՄԸ

5.1 Մատակարարված ապրանքն ընդունվում է Գնորդի և Վաճառողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսվում է Գնորդի և Վաճառողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ապրանքի մատակարարման համար նախատեսված օրը ներառյալ Վաճառողը Գնորդին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 3): Ընդ որում Վաճառողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

5.2 Եթե մատակարարված ապրանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Գնորդը պայմանագրի 5.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 10 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Վաճառողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

5.3 Եթե մատակարարված ապրանքը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Գնորդը չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 5.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Վաճառողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Գնորդը ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Վաճառողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

5.4 Եթե պայմանագրի 5.2 կետով սահմանված ժամկետում Գնորդը չի ընդունում մատակարարված ապրանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատակարարված ապրանքը համարվում է ընդունված և պայմանագրի 5.2 կետով սահման¬ված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Գնորդը

էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Վաճառողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանա¬գրությունը:

6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

6.1 Վաճառողը պատասխանատվություն է կրում հանձնած ապրանքի որակի և պայմանագրով նախատեսված մատակարարման ժամկետների պահպանման համար:

6.2 Վաճառողի կողմից պայմանագրով նախատեսված ապրանքի մատակարարման ժամկետների խախտման դեպքում Վաճառողից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ՝ մատակարարման ենթակա, սակայն չմատակարարված ապրանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

6.3 Պայմանագրի 1.1 կետում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք մատակարարելու յուրաքանչյուր դեպքում Վաճառողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի գնի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:

6.4 Պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Վաճառողին վճարման ենթակա գումարների հետ:

6.5 Գնորդի կողմից պայմանագրի 3.3 կետով նախատեսված ժամկետի խախտման համար Գնորդի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

6.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտվորությունները լրիվ կատարելուց:

7. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

8. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

8.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Գնորդի կողմից այն ստորագրելու պահից և գործում է մինչև կողմերի՝ պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

8.2 Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

8.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ պայմանագիրը կնքելու նատակով կազմակերպված գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Վաճառողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Գնորդը իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Գնորդը չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Վաճառողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Գնորդի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

8.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

8.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ապրանքի ծավալների կամ ձեռք բերվող ապրանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

8.8 Ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Վաճառողի առաջարկության առկայության դեպքում, պայմանով, որ Գնորդի մոտ չի վերացել ապրանքի օգտագործման պահանջը: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

8.9 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Վաճառող կամ Գնորդ) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Վաճառողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Վաճառողը:

8.10 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապրանքի մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապրանքի մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

8.11 Վաճառողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Գնորդը հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Վաճառողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից:

8.12 Պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

8.13 Պայմանագիրը կազմված է **23 էջից**, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Պայմանագրի N 1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները, համարվում են պայմանագրի անբաժանելի մասը:

8.14 Պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

9. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

ԳՆՈՐԴ	**ՎԱՃԱՌՈՂ**
Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան Հիմնադրամ	«Սմարթլայն» ՍՊԸ
ք. Երևան, Կորյունի 2	Հասցե՝ ք.Երևան,Վարդանանց 110
060 621 000	Բանկ՝ «Հայէկոնոմբանկ» ԲԲԸ
Հայբիզնեսբանկ ՓԲԸ	Հ/Հ 16300-7031509
11500166513800	ՀՎՀՀ 01548908
01503448	
Արմեն Աբգարի Մուրադյան	Տնօրեն՝ Տիգրան Ղարիբյան
Digitally signed by MURADYAN ARMEN 2007720078 Date: 2019.05.24 19:39:47 AMST	Digitally signed by GHARIBYAN TIGRAN 1801840415 Date: 2019.05.22 09:55:08 GMT+04:00
/ստորագրություն/	---
Կ.Տ	/ստորագրություն/
	Կ.Տ

Անհրաժեշտության դեպքում պայմանագրում կարող են ներառվել ՀՀ օրենսդրությանը չհակասող դրույթներ:

Հավելված N 1
« » « » 2019թ. կնքված
«ԳՀԱՊՁԲ-2019/8-2-ԵՊԲՀ-3» ծածկագրով պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

Ապրանքի											
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	CPV կոդ	անվանումը եւ ապրանքային նշանը	արտադրողի անվանումը եւ ծագման երկիրը	տեխնիկական բնութագիրը	չափման միավորը	միավոր գինը/ՀՀ դրամ	ընդհանուր գինը/ՀՀ դրամ	ընդհանուր քանակը	Մատակարարում		
									Հասցե	Ենթակա քանակը	Կատարման վերջնաժամկետը
4	30237310	Քարտրիջ 2/ HP LaserJet 1010,1020,1022 տպիչների HP 12A Black Original LaserJet Toner Cartridge, Q2612A (~2,000 էջ)	ՉԺՀ/ ՉԺՀ	HP LaserJet 1010,1020,1022 տպիչների HP 12A Black Original LaserJet Toner Cartridge, Q2612A (~2,000 էջ) Պարտադիր պայմաններ՝ քարտրիջը պետք է ամբողջովին և հերմետիկ տեղադրված լինի գործարանային օդային բարձիկի մեջ /airback/: Գործարանային տուփում քարտրիջի գործարանային անձնագրի առկայություն: Տուփի վրա պետք է դաջված լինի քարտրիջի գործարանային արտադրման ամսաթիվը: Քարտրիջի վրա հոլոգրաֆիկ նշանի՝ պիտակի առկայություն: Տուփը բացվում է պաշտպանիչ զիգզագաձև հատուկ շերտը հեռացնելու միջոցով: Պահպանման երաշխիքային ժամկետ՝ 1 տարի:	հատ	30400	912000	30	ք.Երևան ,Կորյուն ի 2	30	Պայմանագրի կնքման օրվանից հաշված 40 օրացուցային օրվա ընթացքում:
5	30237310	Քարտրիջ 4 / HP LaserJet 1200 տպիչի	ՉԺՀ/ ՉԺՀ	HP LaserJet 1200 տպիչի HP 15X High Yield Black Original LaserJet Toner Cartridge, C7115X (~3,500 էջ)	հատ	40500	202500	5	ք.Երևան ,Կորյուն ի 2	5	Պայմանագրի կնքման օրվանից

		HP 15X High Yield Black Original LaserJet Toner Cartridge, C7115X (~3,500 էջ)		Պարտադիր պայմաններ՝ քարտրիջը պետք է ամբողջովին և հերմետիկ տեղադրված լինի գործարանային օդային բարձիկի մեջ /airback/: Գործարանային տուփում քարտրիջի գործարանային անձնագրի առկայություն: Տուփի վրա պետք է դաջված լինի քարտրիջի գործարանային արտադրման ամսաթիվը: Քարտրիջի վրա հոլոգրաֆիկ նշանի՝ պիտակի առկայություն: Տուփը բացվում է պաշտպանիչ զիգզագաձև հատուկ շերտը հեռացնելու միջոցով: Պահպանման երաշխիքային ժամկետ՝ 1 տարի:							հաշված 40 օրացուցային օրվա ընթացքում:
6	30237 310	Քարտրիջ 5 / HP LaserJet 1160/1320 տպիչի HP 49X High Yield Black Original LaserJet Toner Cartridge, Q5949X (~6.000 էջ)	ՀԺՀ/ ՀԺՀ	HP LaserJet 1160/1320 տպիչի HP 49X High Yield Black Original LaserJet Toner Cartridge, Q5949X (~6.000 էջ) Պարտադիր պայմաններ՝ քարտրիջը պետք է ամբողջովին և հերմետիկ տեղադրված լինի գործարանային օդային բարձիկի մեջ /airback/: Գործարանային տուփում քարտրիջի գործարանային անձնագրի առկայություն: Տուփի վրա պետք է դաջված լինի քարտրիջի գործարանային արտադրման ամսաթիվը: Քարտրիջի վրա հոլոգրաֆիկ նշանի՝ պիտակի առկայություն: Տուփը բացվում է պաշտպանիչ զիգզագաձև հատուկ շերտը հեռացնելու միջոցով: Պահպանման երաշխիքային ժամկետ՝ 1 տարի:	հատ	44950	449500	10	ք.Երևան ,Կորյունի 2	10	Պայմանագրի կնքման օրվանից հաշված 40 օրացուցային օրվա ընթացքում:

7	30237 310	Քարտրիջ 6 / HP LaserJet 2300n տպիչի HP 10A Black Original LaserJet Toner Cartridge, Q2610A (~6.000 էջ)	***ՉԺՀ/ ՉԺՀ***	HP LaserJet 2300n տպիչի HP 10A Black Original LaserJet Toner Cartridge, Q2610A (~6.000 էջ) Պարտադիր պայմաններ՝ քարտրիջը պետք է ամբողջովին և հերմետիկ տեղադրված լինի գործարանային օդային բարձիկի մեջ /airback/: Գործարանային տուփում քարտրիջի գործարանային անձնագրի առկայություն: Տուփի վրա պետք է դաջված լինի քարտրիջի գործարանային արտադրման ամսաթիվը: Քարտրիջի վրա հոլոգրաֆիկ նշանի՝ պիտակի առկայություն: Տուփը բացվում է պաշտպանիչ զիգզագաձև հատուկ շերտը հեռացնելու միջոցով: Պահպանման երաշխիքային ժամկետ՝ 1 տարի:	հատ	55000	55000	1	բ.Երևան ,Կորյուն ի 2	1	Պայմանագրի կնքման օրվանից հաշված 40 օրացուցային օրվա ընթացքում:
10	30237 310	Քարտրիջ 10/ HP LaserJet P2015dn տպիչի HP 53X High Yield Black Original LaserJet Toner Cartridge, Q7553X (~7,000 էջ)	***Ճապոնիա/ Ճապոնիա***	HP LaserJet P2015dn տպիչի HP 53X High Yield Black Original LaserJet Toner Cartridge, Q7553X (~7,000 էջ) Պարտադիր պայմաններ՝ քարտրիջը պետք է ամբողջովին և հերմետիկ տեղադրված լինի գործարանային օդային բարձիկի մեջ /airback/: Գործարանային տուփում քարտրիջի գործարանային անձնագրի առկայություն: Տուփի վրա պետք է դաջված լինի քարտրիջի գործարանային արտադրման ամսաթիվը: Քարտրիջի վրա հոլոգրաֆիկ նշանի՝ պիտակի առկայություն: Տուփը բացվում է պաշտպանիչ զիգզագաձև հատուկ շերտը հեռացնելու միջոցով: Պահպանման երաշխիքային ժամկետ՝ 1	հատ	43200	216000	5	բ.Երևան ,Կորյուն ի 2	5	Պայմանագրի կնքման օրվանից հաշված 40 օրացուցային օրվա ընթացքում:

				տարի:							
11	30237 310	Քարտրիջ 11 / HP LaserJet P2055dn տպիչի HP 05A Black Original LaserJet Toner Cartridge, CE505A (~2300 էջ)	***ԱՄՆ/ ԱՄՆ***	HP LaserJet P2055dn տպիչի HP 05A Black Original LaserJet Toner Cartridge, CE505A (~2300 էջ) Պարտադիր պայմաններ՝ քարտրիջը պետք է ամբողջովին և հերմետիկ տեղադրված լինի գործարանային օդային բարձիկի մեջ /airback/: Գործարանային տուփում քարտրիջի գործարանային անձնագրի առկայություն: Տուփի վրա պետք է դաջված լինի քարտրիջի գործարանային արտադրման ամսաթիվը: Քարտրիջի վրա հոլոգրաֆիկ նշանի՝ պիտակի առկայություն: Տուփը բացվում է պաշտպանիչ զիգզագաձև հատուկ շերտը հեռացնելու միջոցով: Պահպանման երաշխիքային ժամկետ՝ 1 տարի:	հատ	31200	624000	20	ք.Երևան ,Կորյուն ի 2	20	Պայմանագրի կնքման օրվանից հաշված 40 օրացուցային օրվա ընթացքում:
12	30237 310	Քարտրիջ 12 / HP LaserJet P2055dn տպիչի HP 05X High Yield Black Original LaserJet Toner Cartridge, CE505X (~6500 էջ)	***Ճապոնիա/ Ճապոնիա***	HP LaserJet P2055dn տպիչի HP 05X High Yield Black Original LaserJet Toner Cartridge, CE505X (~6500 էջ) Պարտադիր պայմաններ՝ քարտրիջը պետք է ամբողջովին և հերմետիկ տեղադրված լինի գործարանային օդային բարձիկի մեջ /airback/: Գործարանային տուփում քարտրիջի գործարանային անձնագրի առկայություն: Տուփի վրա պետք է դաջված լինի քարտրիջի գործարանային արտադրման ամսաթիվը: Քարտրիջի վրա հոլոգրաֆիկ նշանի՝ պիտակի	հատ	52500	1050000	20	ք.Երևան ,Կորյուն ի 2	20	Պայմանագրի կնքման օրվանից հաշված 40 օրացուցային օրվա ընթացքում:

				առկայություն: Տուփը բացվում է պաշտպանիչ զիգզագաձև հատուկ շերտը հեռացնելու միջոցով: Պահպանման երաշխիքային ժամկետ՝ 1 տարի:							
13	30237 310	Քարտրիջ 13 / HP LaserJet Pro M401/M425 տպիչի HP 80A Black Original LaserJet Toner Cartridge, CF280A (~2700 էջ)	***ԱՄՆ/ ԱՄՆ***	HP LaserJet Pro M401/M425 տպիչի HP 80A Black Original LaserJet Toner Cartridge, CF280A (~2700 էջ) Պարտադիր պայմաններ՝ քարտրիջը պետք է ամբողջովին և հերմետիկ տեղադրված լինի գործարանային օդային բարձիկի մեջ /airback/: Գործարանային տուփում քարտրիջի գործարանային անձնագրի առկայություն: Տուփի վրա պետք է դաջված լինի քարտրիջի գործարանային արտադրման ամսաթիվը: Քարտրիջի վրա հոլոգրաֆիկ նշանի՝ պիտակի առկայություն: Տուփը բացվում է պաշտպանիչ զիգզագաձև հատուկ շերտը հեռացնելու միջոցով: Պահպանման երաշխիքային ժամկետ՝ 1 տարի:	հատ	32400	64800	2	ք.Երևան ,Կորյուն ի 2	2	Պայմանագր ի կնքման օրվանից հաշված 40 օրացուցային օրվա ընթացքում:
14	30237 310	Քարտրիջ 14 / HP LaserJet Pro M401/M425 տպիչի HP 80X High Yield Black Original LaserJet Toner Cartridge, CF280X (~6900 էջ)	***Ճապոնիա/ Ճապոնիա***	HP LaserJet Pro M401/M425 տպիչի HP 80X High Yield Black Original LaserJet Toner Cartridge, CF280X (~6900 էջ) Պարտադիր պայմաններ՝ քարտրիջը պետք է ամբողջովին և հերմետիկ տեղադրված լինի գործարանային օդային բարձիկի մեջ /airback/: Գործարանային տուփում քարտրիջի գործարանային անձնագրի առկայություն: Տուփի վրա պետք է դաջված լինի քարտրիջի գործարանային արտադրման ամսաթիվը: Քարտրիջի վրա	հատ	54600	109200	2	ք.Երևան ,Կորյուն ի 2	2	Պայմանագր ի կնքման օրվանից հաշված 40 օրացուցային օրվա ընթացքում:

				հոլոգրաֆիկ նշանի՝ պիտակի առկայություն: Տուփը բացվում է պաշտպանիչ զիգզագաձև հատուկ շերտը հեռացնելու միջոցով: Պահպանման երաշխիքային ժամկետ՝ 1 տարի:							
17	30237 310	Քարտրիջ 17 / HP LaserJet Pro M1536dnf MFP ԲՖ սարքի HP 78A Black Original LaserJet Toner Cartridge, CE278A (~2,100 էջ)	***Եվրոպա/ Եվրոպա***	HP LaserJet Pro M1536dnf MFP ԲՖ սարքի HP 78A Black Original LaserJet Toner Cartridge, CE278A (~2,100 էջ) Պարտադիր պայմաններ՝ քարտրիջը պետք է ամբողջովին և հերմետիկ տեղադրված լինի գործարանային օդային բարձիկի մեջ /airback/: Գործարանային տուփում քարտրիջի գործարանային անձնագրի առկայություն: Տուփի վրա պետք է դաջված լինի քարտրիջի գործարանային արտադրման ամսաթիվը: Քարտրիջի վրա հոլոգրաֆիկ նշանի՝ պիտակի առկայություն: Տուփը բացվում է պաշտպանիչ զիգզագաձև հատուկ շերտը հեռացնելու միջոցով: Պահպանման երաշխիքային ժամկետ՝ 1 տարի:	հատ	29500	1475000	50	բ.Երևան ,Կորյուն ի 2	50	Պայմանագրի կնքման օրվանից հաշված 40 օրացուցային օրվա ընթացքում:
18	30237 310	Քարտրիջ 18 / HP LaserJet M1132 MFP ԲՖ սարքի HP 85A Black Original LaserJet Toner Cartridge, CE285A (~1,600 էջ)	***Եվրոպա /Եվրոպա***	HP LaserJet M1132 MFP ԲՖ սարքի HP 85A Black Original LaserJet Toner Cartridge, CE285A (~1,600 էջ) Պարտադիր պայմաններ՝ քարտրիջը պետք է ամբողջովին և հերմետիկ տեղադրված լինի գործարանային օդային բարձիկի մեջ /airback/: Գործարանային տուփում քարտրիջի գործարանային անձնագրի առկայություն: Տուփի վրա պետք է դաջված լինի քարտրիջի գործարանային արտադրման	հատ	29200	1752000	60	բ.Երևան ,Կորյուն ի 2	60	Պայմանագրի կնքման օրվանից հաշված 40 օրացուցային օրվա ընթացքում:

				ամսաթիվը: Քարտրիջի վրա հոլոգրաֆիկ նշանի՝ պիտակի առկայություն: Տուփը բացվում է պաշտպանիչ զիգզագաձև հատուկ շերտը հեռացնելու միջոցով: Պահպանման երաշխիքային ժամկետ՝ 1 տարի:							
20	30237310	Քարտրիջ 24 / Canon PC-320D պատճենահանող սարքի համար Canon Cartridge T	***Ճապոնիա/ Ճապոնիա***	Canon PC-320D պատճենահանող սարքի համար Canon Cartridge T Պարտադիր պայմաններ՝ քարտրիջը պետք է ամբողջովին և հերմետիկ տեղադրված լինի գործարանային օդային բարձիկի մեջ /airback/: Գործարանային տուփում քարտրիջի գործարանային անձնագրի առկայություն: Տուփի վրա պետք է դաջված լինի քարտրիջի գործարանային արտադրման ամսաթիվը: Քարտրիջի վրա հոլոգրաֆիկ նշանի՝ պիտակի առկայություն: Տուփը բացվում է պաշտպանիչ զիգզագաձև հատուկ շերտը հեռացնելու միջոցով: Պահպանման երաշխիքային ժամկետ՝ 1 տարի:	հատ	48000	96000	2	ք.Երևան ,Կորյունի 2	2	Պայմանագրի կնքման օրվանից հաշված 40 օրացուցային օրվա ընթացքում:
21	30237310	Քարտրիջ 25 / Canon i-SENSYS MF4010 ԲՖ սարքի Canon Cartridge FX10 (~2,000 էջ)	***Ճապոնիա/ Ճապոնիա***	Canon i-SENSYS MF4010 ԲՖ սարքի Canon Cartridge FX10 (~2,000 էջ) Պարտադիր պայմաններ՝ քարտրիջը պետք է ամբողջովին և հերմետիկ տեղադրված լինի գործարանային օդային բարձիկի մեջ /airback/: Գործարանային տուփում քարտրիջի գործարանային անձնագրի առկայություն: Տուփի վրա պետք է դաջված լինի քարտրիջի գործարանային արտադրման ամսաթիվը: Քարտրիջի վրա	հատ	31000	62000	2	ք.Երևան ,Կորյունի 2	2	Պայմանագրի կնքման օրվանից հաշված 40 օրացուցային օրվա ընթացքում:

				հոլոգրաֆիկ նշանի՝ պիտակի առկայություն: Տուփը բացվում է պաշտպանիչ զիգզագաձև հատուկ շերտը հեռացնելու միջոցով: Պահպանման երաշխիքային ժամկետ՝ 1 տարի:							
22	30237 310	Քարտրիջ 26 / Canon i-SENSYS MF4018/4140 /MF4370dn ԲՖ սարքի Canon Cartridge FX10 (~2,000 էջ)	***Ճապոնիա/ Ճապոնիա***	Canon i-SENSYS MF4018/4140/MF4370dn ԲՖ սարքի Canon Cartridge FX10 (~2,000 էջ) Պարտադիր պայմաններ՝ քարտրիջը պետք է ամբողջովին և հերմետիկ տեղադրված լինի գործարանային օդային բարձիկի մեջ /airback/: Գործարանային տուփում քարտրիջի գործարանային անձնագրի առկայություն: Տուփի վրա պետք է դաջված լինի քարտրիջի գործարանային արտադրման ամսաթիվը: Քարտրիջի վրա հոլոգրաֆիկ նշանի՝ պիտակի առկայություն: Տուփը բացվում է պաշտպանիչ զիգզագաձև հատուկ շերտը հեռացնելու միջոցով: Պահպանման երաշխիքային ժամկետ՝ 1 տարի:	հատ	31000	310000	10	ք.Երևան ,Կորյուն ի 2	10	Պայմանագրի կնքման օրվանից հաշված 40 օրացուցային օրվա ընթացքում:
23	30237 310	Քարտրիջ 27 / Canon i-SENSYS MF 4410/4430/4 450 ԲՖ սարքի Canon Cartridge 728 (~ 2,100 էջ)	***Ճապոնիա/ Ճապոնիա***	Canon i-SENSYS MF 4410/4430/4450 ԲՖ սարքի Canon Cartridge 728 (~ 2,100 էջ) Պարտադիր պայմաններ՝ քարտրիջը պետք է ամբողջովին և հերմետիկ տեղադրված լինի գործարանային օդային բարձիկի մեջ /airback/: Գործարանային տուփում քարտրիջի գործարանային անձնագրի առկայություն: Տուփի վրա պետք է դաջված լինի քարտրիջի գործարանային արտադրման ամսաթիվը: Քարտրիջի վրա	հատ	30500	244000	8	ք.Երևան ,Կորյուն ի 2	8	Պայմանագրի կնքման օրվանից հաշված 40 օրացուցային օրվա ընթացքում:

				հոլոգրաֆիկ նշանի՝ պիտակի առկայություն: Տուփը բացվում է պաշտպանիչ զիգզագաձև հատուկ շերտը հեռացնելու միջոցով: Պահպանման երաշխիքային ժամկետ՝ 1 տարի:							
24	30237 310	Քարտրիջ 28 / Canon i-SENSYS LBP2900/3000 տպիչի Canon 703 Black Toner Cartridge (2,000 էջ)	***Ճապոնիա/ Ճապոնիա***	Canon i-SENSYS LBP2900/3000 տպիչի Canon 703 Black Toner Cartridge (2,000 էջ) Պարտադիր պայմաններ՝ քարտրիջը պետք է ամբողջովին և հերմետիկ տեղադրված լինի գործարանային օդային բարձիկի մեջ /airback/: Գործարանային տուփում քարտրիջի գործարանային անձնագրի առկայություն: Տուփի վրա պետք է դաջված լինի քարտրիջի գործարանային արտադրման ամսաթիվը: Քարտրիջի վրա հոլոգրաֆիկ նշանի՝ պիտակի առկայություն: Տուփը բացվում է պաշտպանիչ զիգզագաձև հատուկ շերտը հեռացնելու միջոցով: Պահպանման երաշխիքային ժամկետ՝ 1 տարի:	հատ	29800	89400	3	բ.Երևան ,Կորյուն ի 2	3	Պայմանագրի կնքման օրվանից հաշված 40 օրացուցային օրվա ընթացքում:
25	30237 310	Քարտրիջ 29 / Canon i-SENSYS LBP6650dn/ LBP252dw տպիչի Canon 719H High Yield Toner Cartridge (6,400 էջ)	**Ճապոնիա/ Ճապոնիա**	Canon i-SENSYS LBP6650dn/LBP252dw տպիչի Canon 719H High Yield Toner Cartridge (6,400 էջ) Պարտադիր պայմաններ՝ քարտրիջը պետք է ամբողջովին և հերմետիկ տեղադրված լինի գործարանային օդային բարձիկի մեջ /airback/: Գործարանային տուփում քարտրիջի գործարանային անձնագրի առկայություն: Տուփի վրա պետք է դաջված լինի քարտրիջի գործարանային արտադրման	հատ	54600	819000	15	բ.Երևան ,Կորյուն ի 2	15	Պայմանագրի կնքման օրվանից հաշված 40 օրացուցային օրվա ընթացքում:

				ամսաթիվը: Քարտրիջի վրա հոլոգրաֆիկ նշանի՝ պիտակի առկայություն: Տուփը բացվում է պաշտպանիչ զիգզագաձև հատուկ շերտը հեռացնելու միջոցով: Պահպանման երաշխիքային ժամկետ՝ 1 տարի:							
26	30237310	Քարտրիջ 30 / Canon i-SENSYS LBP6000 տպիչի/MF3010 ԲՖ սարքի Canon 725 Toner-Cartridge (~1600 էջ)	**Ճապոնիա/ Ճապոնիա**	Canon i-SENSYS LBP6000 տպիչի/MF3010 ԲՖ սարքի Canon 725 Toner-Cartridge (~1600 էջ)Պարտադիր պայմաններ՝ քարտրիջը պետք է ամբողջովին և հերմետիկ տեղադրված լինի գործարանային օդային բարձիկի մեջ /airback/: Գործարանային տուփում քարտրիջի գործարանային անձնագրի առկայություն: Տուփի վրա պետք է դաջված լինի քարտրիջի գործարանային արտադրման ամսաթիվը: Քարտրիջի վրա հոլոգրաֆիկ նշանի՝ պիտակի առկայություն: Տուփը բացվում է պաշտպանիչ զիգզագաձև հատուկ շերտը հեռացնելու միջոցով: Պահպանման երաշխիքային ժամկետ՝ 1 տարի:	հատ	29500	1475000	50	ք.Երևան ,Կորյունի 2	50	Պայմանագրի կնքման օրվանից հաշված 40 օրացուցային օրվա ընթացքում:

27	30237310	Քարտրիջ 31 / Canon i-SENSYS MF211/MF212 w/MF-226dn/MF-229dw/ ԲՖ սարքի Canon 737 Toner Cartridge (~2,400 էջ)	**Ճապոնիա/ Ճապոնիա**	Canon i-SENSYS MF211/MF212w/MF-226dn/MF-229dw/ ԲՖ սարքի Canon 737 Toner Cartridge (~2,400 էջ) Պարտադիր պայմաններ՝ քարտրիջը պետք է ամբողջովին և հերմետիկ տեղադրված լինի գործարանային օդային բարձիկի մեջ /airback/: Գործարանային տուփում քարտրիջի գործարանային անձնագրի առկայություն: Տուփի վրա պետք է դաջված լինի քարտրիջի գործարանային արտադրման ամսաթիվը: Քարտրիջի վրա հոլոգրաֆիկ նշանի՝ պիտակի առկայություն: Տուփը բացվում է պաշտպանիչ զիգզագաձև հատուկ շերտը հեռացնելու միջոցով: Պահպանման երաշխիքային ժամկետ՝ 1 տարի:	հատ	30400	152000	5	ք.Երևան ,Կորյուն ի 2	5	Պայմանագրի կնքման օրվանից հաշված 40 օրացուցային օրվա ընթացքում:
29	30237310	Քարտրիջ 33 / Canon i-SENSYS LBP3010/3100 տպիչի Canon 712 Black Toner Cartridge (1,500 էջ)	**Ճապոնիա/ Ճապոնիա**	Canon i-SENSYS LBP3010/3100 տպիչի Canon 712 Black Toner Cartridge (1,500 էջ) Պարտադիր պայմաններ՝ քարտրիջը պետք է ամբողջովին և հերմետիկ տեղադրված լինի գործարանային օդային բարձիկի մեջ /airback/: Գործարանային տուփում քարտրիջի գործարանային անձնագրի առկայություն: Տուփի վրա պետք է դաջված լինի քարտրիջի գործարանային արտադրման ամսաթիվը: Քարտրիջի վրա հոլոգրաֆիկ նշանի՝ պիտակի առկայություն: Տուփը բացվում է	հատ	31000	155000	5	ք.Երևան ,Կորյուն ի 2	5	Պայմանագրի կնքման օրվանից հաշված 40 օրացուցային օրվա ընթացքում:

				պաշտպանիչ զիգզագաձև հատուկ շերտը հեռացնելու միջոցով: Պահպանման երաշխիքային ժամկետ՝ 1 տարի:							

***Պարտադիր պայման է ապրանքի չօգտագործված լինելը:**

ԳՆՈՐԴ
Երևանի Մխիթար Հերացու անվան պետական
բժշկական համալսարան Հիմնադրամ
ք. Երևան, Կորյունի 2
060 621 000
Հայբիզնեսբանկ ՓԲԸ
11500166513800
01503448
Արմեն Աբգարի Մուրադյան

/ստորագրություն/
Կ.Տ

Digitally signed by MURADYAN ARMEN
2007720078
Date: 2019.05.24 19:41:02 AMST

ՎԱՃԱՌՈՂ
«Սմարթլայն» ՍՊԸ
Հասցե՝ ք.Երևան,Վարդանանց 110
Բանկ՝ «Հայէկոնոմբանկ» ԲԲԸ
Հ/Հ 16300-7031509
ՀՎՀՀ 01548908

Տնօրեն՝ Տիգրան Ղարիբյան

Digitally signed by GHARIBYAN TIGRAN
1801840415
Date: 2019.05.22 09:54:35 GMT+04:00

/ստորագրություն/
Կ.Տ

Հավելված N 2
« » « » 2019թ.. կնքված
«ԳՀԱՊՁԲ-2019/8-2-ԵՊԲՀ-3» ծածկագրով պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Ապրանքի															
Հ/Հ	*(CPV)*	*անվանումը*	*դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2019 թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում՝***												
			հունվար	*փետրվար*	*մարտ*	*ապրիլ*	*մայիս*	*հունիս*	*հուլիս*	*օգոստոս*	*սեպտեմբեր*	*հոկտեմբեր*	*նոյեմբեր*	*դեկտեմբեր*	*Ընդամենը*
4	30237310	Քարտրիջ 2	***0***	***0***	***0***	***0***	***0***	912000	912000	912000	912000	912000	912000	912000	**912000**
5	30237310	Քարտրիջ 4	***0***	***0***	***0***	***0***	***0***	202500	202500	202500	202500	202500	202500	202500	**202500**
6	30237310	Քարտրիջ 5	***0***	***0***	***0***	***0***	***0***	449500	449500	449500	449500	449500	449500	449500	**449500**
7	30237310	Քարտրիջ 6	***0***	***0***	***0***	***0***	***0***	55000	55000	55000	55000	55000	55000	55000	**55000**

10	30237310	Քարտրիջ 10	***0***	***0***	***0***	***0***	***0***	216000	216000	216000	216000	216000	216000	216000	**216000**
11	30237310	Քարտրիջ 11	***0***	***0***	***0***	***0***	***0***	624000	624000	624000	624000	624000	624000	624000	**624000**
12	30237310	Քարտրիջ 12	***0***	***0***	***0***	***0***	***0***	1050000	1050000	1050000	1050000	1050000	1050000	1050000	**1050000**
13	30237310	Քարտրիջ 13	***0***	***0***	***0***	***0***	***0***	64800	64800	64800	64800	64800	64800	64800	**64800**
14	30237310	Քարտրիջ 14	***0***	***0***	***0***	***0***	***0***	109200	109200	109200	109200	109200	109200	109200	**109200**
17	30237310	Քարտրիջ 17	***0***	***0***	***0***	***0***	***0***	1475000	1475000	1475000	1475000	1475000	1475000	1475000	**1475000**
18	30237310	Քարտրիջ 18	***0***	***0***	***0***	***0***	***0***	1752000	1752000	1752000	1752000	1752000	1752000	1752000	**1752000**

20	30237310	Քարտրիջ 24	***0***	***0***	***0***	***0***	***0***	96000	96000	96000	96000	96000	96000	96000	**96000**
21	30237310	Քարտրիջ 25	***0***	***0***	***0***	***0***	***0***	62000	62000	62000	62000	62000	62000	62000	**62000**
22	30237310	Քարտրիջ 26	***0***	***0***	***0***	***0***	***0***	310000	310000	310000	310000	310000	310000	310000	**310000**
23	30237310	Քարտրիջ 27	***0***	***0***	***0***	***0***	***0***	244000	244000	244000	244000	244000	244000	244000	**244000**
24	30237310	Քարտրիջ 28	***0***	***0***	***0***	***0***	***0***	89400	89400	89400	89400	89400	89400	89400	**89400**
25	30237310	Քարտրիջ 29	***0***	***0***	***0***	***0***	***0***	819000	819000	819000	819000	819000	819000	819000	**819000**
26	30237310	Քարտրիջ 30	***0***	***0***	***0***	***0***	***0***	1475000	1475000	1475000	1475000	1475000	1475000	1475000	**1475000**

27	30237310	Քարտրիջ 31	*0*	*0*	*0*	*0*	*0*	152000	152000	152000	152000	152000	152000	152000	**152000**
29	30237310	Քարտրիջ 33	*0*	*0*	*0*	*0*	*0*	155000	155000	155000	155000	155000	155000	155000	**155000**

** Վճարման ենթակա գումարները ներկայացվում են աճողական կարգով:*

ԳՆՈՐԴ

Երևանի Մխիթար Հերացու անվան պետական
բժշկական համալսարան Հիմնադրամ
ք. Երևան, Կորյունի 2
060 621 000
Հայբիզնեսբանկ ՓԲԸ 11500166513800
01503448
Արմեն Աբգարի Մուրադյան

/ստորագրություն/
Կ.Տ

Digitally signed by MURADYAN ARMEN
2007720078
Date: 2019.05.24 19:41:23 AMST

ՎԱՃԱՌՈՂ

«Սմարթլայն» ՍՊԸ
Հասցե՝ ք.Երևան,Վարդանանց 110
Բանկ՝ «Հայէկոնոմբանկ» ԲԲԸ
Հ/Հ 16300-7031509
ՀՎՀՀ 01548908

Տնօրեն՝ Տիգրան Ղարիբյան

Digitally signed by GHARIBYAN
TIGRAN 1801840415
Date: 2019.05.22 09:54:01
GMT+04:00

/ստորագրություն/
Կ.Տ

Հավելված N 3
« » « » 2019թ. կնքված
«ԳՀԱՊՁԲ-2019/8-2-ԵՊԲՀ-3» ծածկագրով պայմանագրի

Պայմանագրի կողմ	Պատվիրատու
_____	_____
_____	_____
գտնվելու վայրը _____	գտնվելու վայրը _____
հհ _____	հհ_____
հվհհ _____	հվհհ_____

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

« » « » 20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝
_____
_
Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «_____» 20 թ.
Պայմանագրի համարը՝ _____
Պատվիրատուն և Պայմանագրի կողմը՝ հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ « » « » 20 թ. դուրս գրված N ___ հաշիվ ապրանքագիրը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը կատարել է հետևյալ աշխատանքները, կամ մատուցել է հետևյալ ծառայությունները, կամ մատակարարել է հետևյալ ապրանքները՝

N	Մատակարարված ապրանքների, կատարված աշխատանքների, մատուցված ծառայությունների							
	անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը		Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/
			ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի		

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ ապրանքագիրը և դրական եզրակացությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Ապրանքը հանձնեց	Ապրանքն ընդունեց
_____	_____
ստորագրություն	ստորագրություն
_____	_____
ազգանուն, անուն	ազգանուն, անուն
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված 3.1
« » « » 2019թ. կնքված
«ԳՀԱՊՁԲ-2019/8-2-ԵՊԲՀ-3» ծածկագրով պայմանագրի

ԱԿՏ N _____
պայմանագրի արդյունքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ _____-ի (այսուհետ՝ Գնորդ) և _____
Գնորդի անվանումը Վաճառողի անվանումը
(այսուհետ՝ Վաճառող) միջև 20 թ. _____ -ին կնքված N _____
պայմանագրի կնքման ամսաթիվը պայմանագրի համարը
պայմանագրի շրջանակներում Վաճառողը 20 թ. _____-ին հանձնման-ընդունման նպատակով Գնորդին հանձնեց ստորև նշված ապրանքները.

Ապրանքի		
անվանումը	չափման միավորը	քանակը (փաստացի)

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց

_____
ազգանուն, անուն

_____
Ստորագրություն

Ընդունեց
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն